ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ _____ « _____ » _____ 2020թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՆ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի լրումն մեր 08.09.2020թ. հ. 02/09-89188 գրության հայտնում եմ, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև Ֆինանսական պայմանագրի փոփոխություն 3-ի նախագծի հաստատման վերաբերյալ տվել է իր համաձայնությունը, մասնավորապես՝ ԵՆԲ վարկային միջոցների հասանելիության վերջնաժամկետը մինչև 2021թ.-ի հունիսի 30-ը երկարաձգման մասով: Ստորև ներկայացվում է հիմնավորումը.

<u>Հիմնավորում</u>

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև Ֆինանսական պայմանագիրը սպառվել է 2018թ. օգոստոսի 31-ին:

Կապալառուն՝ իսպանական «Ագազոս» Ս.Լ. կազմակերպությունը, 2018թ-ի մայիս ամսից, Ֆիրդուսի թաղամասի բնակիչների բողոքների պատճառով, դադարեցրել էր դրենաժային թունելի հորատանցման աշխատանքները՝ պայթեցման հետևանքով առաջացած ցնցումների հետ կապված:

Նոր պայմանագրի ստորագրումը կախված է «Դրենաժային թունելի երկարացման և մետրոյի թունելներում վերականգնողական աշխատանքները» պայմանագրի կողմեր՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Ագազոս» Ս.Լ. միջև պայմանագրի Փոփոխություն 4-ի ստորագրումից:

2020թ.-ի փետրվարի 28-ին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և Ագազոս Ս.Լ.-ի միջև կնքվել է պայմանագրի Փոփոխություն 4-ը, ըստ որի կապալառուն պարտավորվում էր վերսկսել հորատանցման աշխատանքները 2020թ մարտի 23-ին և ավարտել դրանք 2021թ. հունիս 30-ին, որը այս պահին ԵՆԲ-ի կողմից հաստատված վարկային միջոցների հասանելիության վերջնաժամկետն է: COVID-

19 համաճարակի պատճառով, կապալառուն աշխատանքները մեկնարկել է 2020թ.-ի հուլիսի 20-ին:

Աշխատանքների պլան

Կապալառուն իրականացնելու է հետևյալ հիմնական աշխատանքները՝

Տեղամաս Ա /Դրենաժային թունել/

Դրենաժային թունելի հորատանցում՝ 479 մ:

Տեղամաս Բ /Մետրոյի թունելներ/

Ամրակապի ետնամասի դատարկությունների լցոնում՝ մինչև 5000 խ/մ, ամրակապի դետալների մատակարարում, հակակոռոզիոն աշխատանքներ՝ 255 մ, դրենաժային միջոցառումներ:

Ընտրանքային աշխատանքներ (իրականացվելու են ըստ Երևանի մետրոյի հայեցողության), այն է՝

Դրենաժային թունելի երկարացում 150մ-ով՝ «Հանրապետության Հրապարակ» կայարանի հիմնական դրենաժային վերամղման պոմպակայանից դեպի հյուսիս, Երկարացված դրենաժային թունելից լայնական բովանցքների հորատանցում, լրացուցիչ դրենաժային աշխատանքների իրականացում:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև Ֆինանսական պայմանագրի փոփոխություն 3-ի ստորագրումից հետո, Երևանի մետրոպոլիտենը մտադիր է դիմել ԵՆԲ՝ մասհանման համար:

Մասհանումների ժամանակացույց:

2020թ. 1 մլն եվրո

2021թ. 2 մլն եվրո

Կապալառուի վճարման նախնական ժամանակացույց, եվրո

2020թ. IV եռամսյակ	333500
2021թ. I եռամսյակ	333500
2021թ. II եռամսյակ	600000

/ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ